ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ,
ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԹԱԼԻՆ ՀԱՅԿԱԶԻ ԳԱԼՖԱՅԱՆ ԱՇԻՔԵԱՆ

ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԸ ՈՐՊԵՍ ԼՈԳՈՊԵԴԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՄԻՋՈՑ

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

ԺԳ 00.03 - «Հատուկ մանկավարժություն» (լոգոպեդիա) մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ 2026

Ատենախոսության թեման հաստատվել է Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում

Գիտական ղեկավար՝	մանկավարժական գիտությունների թեկնածու, պրոֆեսորի պ/կ՝ Գոհար Ռոբերտի Հովյան
Պաշտոնական ընդդիմախոսներ ՝	մանկավարժական գիտությունների դոկտոր, դոցենտ՝ Ժաննա Հարությունի Պայլոզյան
	մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ՝ Գեղեցիկ Ֆրոնտիկի Գրիգորյան
Առաջատար կազմակերպություն՝	Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ

Ատենախոսության պաշտպանությունը կկայանա 2026 թ. դեկտեմբերի 25-ին, ժամը 10:00–ին՝ Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում գործող ՀՀ ԲԿԳԿ-ի «Մանկավարժություն» 020 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցե՝ 0010, ք. Երևան, Տիգրան Մեծ 17:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2026թ. նոյեմբերի 25-ին:

«Մանկավարժություն» 020 մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար,մանկավարժական
գիտությունների թեկնածու, դոցենտ՝ Թերեզա Յուրիի Ազատյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի արդիականությունը: Ղեկավարվելով «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, 2013; 2017; 2022; 2023թթ. ՀՀ կառավարության որոշումներով, վերոնշյալ օրենքի 17.1 հոդվածի 1-ին կետին համապատասխան, 2022 թվականի հուլիսի 28-ի N 1177-Ն լրամշակումը ենթադրում է մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների մատուցման նոր չափորոշիչների և գործիքների հաստատում, որն, առաջին հերթին ենթադրում է շարունակական մասնագիտական զարգացման հնարավորությունների մշակում նաև խոսքի զարգացմամբ, խոսքային խանգարումների հաղթահարմամբ, կանխարգելմամբ և շտկմամբ զբաղված մասնագետների՝ լոգոպեդների շրջանում:

Ինչպես հայտնի է, ՀՀ Հանրակրթության պետական կրթակարգում ներառված են կրթական քաղաքականության հիմնական դրույթները, դաստիարակության, ուսուցման, ուսումնառության և գնահատման ընդհանուր սկզբունքները: Հանրակրթության պետական կրթակարգի ընդունումը պայմանավորված է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ ամրագրված կրթության իրավունքի իրացման ու պաշտպանության, կրթության համակարգի գործառության և զարգացման համար իրավական երաշխիքների ու մեխանիզմների ապահովման անհրաժեշտությամբ: Կրթակարգի գլխավոր նպատակը որակյալ կրթության ապահովումն է, կրթության հանդեպ հայ ժողովրդի ավանդական վերաբերմունքի պահպանումն ու ամրապնդումը, Հայաստանի Հանրապետության հանրակրթական համակարգի համապատասխանեցումը միջազգայնորեն ընդունված չափանիշներին:

Այս տեսանկյունից, մեկ անգամ հիմնարար կրթություն ստանալն այլևս բավարար պայման լինել չի կարող 21-րդ դարի հատուկ մանկավարժի՝ լոգոպեդի համար: Այդ պատճառով էլ զարգացած երկրներում որակավորման բարձրացման ծրագրերի զարգացումը պատասխանն է արագ փոփոխվող և աճող արտադրության պահանջներին: Ուստի առաջ է քաշվում լրացուցիչ և շարունակական մասնագիտական զարգացման գաղափարը, որը դրվում է ազգային կրթական համակարգերի վերակառուցման և բարեփոխումների հիմքում: Այս առումով, ապացույցների վրա հիմնված ծրագրի կարևորությունը ուսումնական ոլորտում գիտելիքի ընդլայնման և խոսքային թերապիայի պրակտիկաների բարելավման հիմքն է, ինչով էլ պայմանավորված է ատենախոսական հետազոտության արդիականությունը: Շարունակական կրթությունը թույլ է տալիս լոգոպեդներին լինել ժամանակակից և տիրապետել նոր ապացույցների վրա հիմնված տեղեկատվությանը, որը կարող է օգտակար լինել սեփական գործնական աշխատանքում (T. Ashekian, 2023; 2025):

Հետազոտության նպատակն է մշակել մանկավարժական կրթության զարգացման հայեցակարգին համապատասխան լոգոպեդական մասնագիտական զարգացման շարունակական ծրագիր:

Հետազոտության օբյեկտը մասնագիտական շարունակական զարգացման գործընթացն է՝ շարունակական մասնագիտական զարգացման ծրագրերի մշակման և իրականացման հիմքերի ստեղծման տեսանկյունից:

Հետազոտության առարկան շարունակական մասնագիտական զարգացման իրականացման մեթոդներն ու միջոցներն են:

Հետազոտության գիտական վարկածը: Ենթադրվում է, որ ՇՄԶ կազմակերպման գործընթացների բարելավումը, շջանավարտ-բուհ հետադարձ կապի, հասարակության և նրա անդամների համակողմանի զարգացման, աշխատուժի մասնագիտական կարողությունները և հմտությունները աշխատաշուկային համապատասխանեցնելու և զարգացնելու միջոցներն առավել արդյունավետ կարող են կիրառվել, եթե միջազգային չափանիշներին համապատասխան ՀՀ-ում ևս կիրառվեն լոգոպեդների համար նախատեսված ՇՄԶ կրեդիտների շնորհման 3 տեսակներ՝ տեսական, գործնական և ինքնակրթության՝ որոշակիորեն սահմանված ընթացակարգով, հստակ և ստույգ ձևակերպված չափանիշներ և ժամաքանակ ներկայացնող առաջադրվող ծրագրով:

Նպատակը, օբյեկտը, առարկան և վարկածը որոշել են հետազոտության հիմնական խնդիրները.

1. Ուսումնասիրել ՇՄԶ ժամանակակից մոտեցումներն ըստ կրեդիտային համակարգում ամրագրված վերապատրաստումների ընթացակարգի և ենթակա ոլորտների:
2. Հետազոտել և վերլուծել ՇՄԶ վերապատրաստման ժամանակակից մոտեցումներն ու մասնագիտական ուղեցույցների կիրառման առաջատար փորձն՝ ըստ սահմանված կրեդիտային համակարգի և գնահատման առանձնահատկությունների:
3. Մշակել ԿԱՊԿ ունեցող երեխաների հետ աշխատող լոգոպեդների համար նախատեսված ՇՄԶ համակարգային ծրագիր և փորձարարական ճանապարհով հիմնավորել միջազգային չափանիշներին համապատասխան ՇՄԶ կրեդիտների շնորհման ընթացակարգով սահմանված վերապատրաստումների արդյունավետությունը:

Հետազոտության տեսական և մեթոդաբանական հիմք են հանդիսացել ընդհանուր, հատուկ մանկավարժության և լոգոպեդիայի բնագավառում հաստատված տեսություններն ու հետևյալ գիտական սկզբունքներն ու դրույթները՝

- Զարգացնող ուսուցման տեսությունը (Д.Б. Эльконин, 1978; В.В. Давыдов, 1966):
- Փոխհատուցման տեսությունը (Л.С. Выготский, 1983; 2003):
- Գործողությունների և հասկացությունների փուլային ձևավորման տեսությունը (П.Я. Гальперин,1976; М.М. Боген, 1988):

- Ռոքվիլլի ամերիկյան՝ խոսքի, լեզվի և լսողության գիտական կազմակերպության (ASHA) կանոնակարգային մեթոդոլոգիան՝ ուղղված խոսքալեզվային և լսողության սահմանափակ հնարավորություններ ունեցող անձանց հետ աշխատող ոլորտի մասնագետների պարտադիր վերապատրաստմանը՝ մասնագիտական չափորոշիչների ծրագրային դրույթների պահպանմամբ (An Overview of U.S. Accreditation. 2019; Council on Academic Accreditation. American Speech-Language-Hearing Associatio. 2019; 2021; ASHA Membership Profile: Highlights and Trends (англ.). American Speech- Language-Hearing Association. 2018; Benefits of ASHA Membership. American Speech- Language-Hearing Association. 2019):
- «Բժշկասոցիալական փորձաքննության չափորոշիչները հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշումները (2003; 2023);
- ՀՀ կառավարության որոշումներով հաստատված՝ «Կրթության կազմակերպման մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների տրամադրման կարգը» (2017; 2022), վերոնշյալ օրենքի 17.1 հոդվածի 1-ին կետին համապատասխան, 2022 թվականի հուլիսի 28-ի N 1177-Ն լրամշակումը:
- Շարունակական մասնագիտական զարգացումն ապահովող միջոցառումների կազմակերպմանը, իրականացմանը եվ մասնակցությանը ներկայացվող պահանջները, շարունակական մասնագիտական զարգացման յուրաքանչյուր տեսակի գծով շնորհվող ՇՄԶ կրեդիտների քանակը եվ դրանց շնորհման կարգը հաստատելու մասին 26 ապրիլի 2019 թվականի N 20-Ն ՀՀ առողջապահության նախարարի հրամանի (1-ին մաս) «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 5-րդ մասը:

Առաջադրված խնդիրների լուծման համար կիրառվել են հետազոտության հետևյալ մեթոդները.

- Մասնագիտական գրականության ուսումնասիրում և վերլուծություն:
- ՇՄԶ կրեդիտային ծրագրերով իրականացվող վերապատրաստումների ուսումնասիրում և ընդհանրացում:
- Շարունակական մասնագիտական զարգացման կրեդիտներ (ՇՄԶ կրեդիտներ) հավաքելու և յուրաքանչյուր շրջափուլում առնվազն երեք տարվա մասնագիտական գործունեության իրականացման գնահատում:
- Հետազոտության հոգեբանամանկավարժական և սոցիոլոգիական մեթոդների կիրառում. դիտում, հարցում, զրույց, անկետավորում:
- Մանկավարժական (լոգոպեդական գնահատման) ստուգողական փորձարարություններ:
- Փորձարարական մեթոդներ՝ հաստատող, ուսուցանող:
- Մաթեմատիկական վիճակագրական մեթոդ:

Հետազոտության գիտական նորույթը.

- ՈՒսումնասիրվել են լոգոպեդական ՇՄԶ արդյունքում շարունակական մասնագիտական զարգացումն ապահովող միջոցառումների կազմակերպման, իրականացման և մասնակցության ներկայացվող պահանջները, շարունակական մասնագիտական զարգացման յուրաքանչյուր տեսակի գծով շնորհվող ՇՄԶ կրեդիտները և դրանց շնորհման կարգը:
- Սահմանվել են հանրակրթությունում և վերականգնողական ոլորտում աշխատող լոգոպեդների շարունակական մասնագիտական զարգացման արդյունքում ձեռք բերած գիտելիքների, կարողությունների և հմտությունների գնահատման չափանիշները՝ մշակված վերապատրաստումների ծրագրի հիման վրա:
- Որոշվել են մասնագիտական գործունեություն իրականացնող ֆիզիկական անձանց մասնագիտական կարողությունների, ունակությունների և հմտությունների զարգացման անընդհատությունն ապահովող գործընթաց իրականացնող և ծառայություններ մատուցող կազմակերպությունների գործունեության առանձնահատկություններն ու գործառույթները:
- Մշակվել է լոգոպեդների շարունակական մասնագիտական զարգացման տեսական, գործնական և ինքնակրթության համակարգային ծրագիր՝ կրթական և վերականգնողական/զարգացման հաստատություններում աշխատող մասնագետների վերապատրաստումներին ներկայացվող պարտադիր պահանջներով, ՇՄԶ գործընթացի կազմակերպման հստակ և ստույգ ձևակերպված չափանիշներով և սահմանված որոշակի ժամաքանակով:

Հետազոտության տեսական նշանակությունը լոգոպեդների շարունակական մասնագիտական զարգացումն ապահովող միջոցառումների, մասնագիտական գործունեություն իրականացնող անձանց մասնագիտական կարողությունների, ունակությունների և հմտությունների զարգացման նպատակով շարունակական մասնագիտական զարգացման ծրագրերով ուսումնառության կազմակերպման և իրականացման գործընթացի համար առաջարկվող մոտեցումների արդյունավետության, ինչպես նաև հետազոտության ստացված արդյունքների տեսական հիմնավորումն է՝ ՇՄԶ ծրագրային գործիքների կիրառման ուսումնասիրմամբ և տեսական վերլուծությամբ:

Հետազոտության գործնական նշանակությունը լոգոպեդների շարունակական մասնագիտական զարգացումն ապահովող վերապատրաստումների բովանդակության, մեթոդների և ուսումնառության կազմակերպման, իրականացման գործընթացի համար առաջարկվող մոտեցումների գործնական մշակումն ու դրանց ներդրումն է ՇՄԶ մանկավարժական գործընթացում՝ ըստ մշակված ծրագրային ոլորտների և

համապատասխան որակավորումն արտացոլող տեղեկատվության, ինչը թույլ է տալիս առավել օբյեկտիվ տվյալներ ունենալ լոգոպեդների համար կազմակերպված վերապատրաստումների բովանդակային հստակ նկարագիր ունենալու:

Պաշտպանությանը ներկայացվող հիմնական դրույթները.

1. ՇՄԶ կրեդիտային համակարգով իրականացված վերապատրաստումները, համապատասխան ընթացակարգով և թեմատիկ ոլորտներով, հանդիսանում են լոգոպեդական աշխատանքի կազմակերպման և արդյունավետության կարևորագույն նախապայման:
2. ՇՄԶ կրեդիտային ծրագրի չափանիշներով մշակված վերապատրաստման ժամանակակից մոտեցումները միտված են մասնագիտական առաջատար փորձը տարածելու և զարգացնելու:
3. Լոգոպեդների համար նախատեսված ՇՄԶ համակարգային մշակված ծրագրի կիրառումը, միջազգային չափանիշներին համապատասխան, կրեդիտների շնորհման ընթացակարգով նպաստում է մասնագիտական վերապատրաստումների արդյունավետությանը:

Հետազոտության արդյունքների հիմնավորումն ու հավաստիությունն ապահովված է հետազոտվողների բավարար քանակականզմով, անցկացված աշխատանքի ծավալով, հետազոտության ժամանակակից և համապատասխան մեթոդների կիրառմամբ, փաստացի փորձարարական նյութի մանրազնին վիճակագրական մշակմամբ:

Հետազոտության արդյունքների փորձարկում: Ատենախոսության առանձին դրույթներ, արդյունքներ և հետևություններ զեկուցվել են Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ Լոգոպեդիայի և վերականգնողական թերապիայի ամբիոնի նիստերում (2023-2025թթ.): Հետազոտությունն անց է կացվել 2023-2026 թվականներին՝ Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ-ում, Երևանի թիվ 1; 2; 3; 4 Տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոններում և Գյումրի քաղաքի ՏՄԱԿ- ում, «Արմավ» կենտրոնում:

Ատենախոսության կառուցվածքն ու ծավալը: Ատենախոսությունը շարադրված է 185 էջ համակարգչային տեքստով, կազմված է ներածությունից, երեք գլխից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածից: Ատենախոսության տեքստը պարունակում է 8 աղյուսակ, 12 տրամագիր, 5 նկար, 2 գծապատկեր և 8 հավելված:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության ներածականում հիմնավորված է թեմայի արդիականությունը, բացահայտված է հիմնախնդրի մշակվածության աստիճանը, ներկայացված են հետազոտության նպատակը, գիտական վարկածը, նպատակից և գիտական վարկածից բխող հետազոտության խնդիրները, առարկան, օբյեկտը, տեսական և մեթոդաբանական հիմքերը, հետազոտության մեթոդները, գիտական նորույթը, տեսական և գործնական նշանակությունը, հետազոտության հավաստիությունն ու հիմնավորվածությունը, փորձաքննությունը:

Ատենախոսության **«Հիմնախնդրի դրվածքը»** խորագրով առաջին գլուխը բաղկացած է 4 ենթագլխից:

Առաջին գլխի՝ «Շարունակական կրթության ապահովումը որպես ժամանակակից լոգոպեդիայում կիրառվող ուսուցման այլընտրանքային մեթոդների և մոտեցումների կարևորագույն բաղադրիչ» խորագրով առաջին ենթագլխում լուսաբանված են վերջին տասնամյակում, նոր մարտահրավերների պայմաններում փոփոխված՝ «Հանրակրթության մասին» օրենքի ՀՀ կառավարության որոշումները՝ 2017; 2022; 2023; 2025թթ., մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների մատուցման նոր չափորոշիչների և գործիքների հաստատումը, որն առաջին հերթին ենթադրում է շարունակական մասնագիտական զարգացման հնարավորությունների մշակում նաև խոսքի զարգացմամբ, խոսքային խանգարումների հաղթահարմամբ, կանխարգելմամբ և շտկմամբ զբաղված մասնագետների՝ լոգոպեդների շրջանում (Հավելված՝ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2022 թվականի դեկտեմբերի 30-ի N 88-Ն հրամանի):

«ՇՄՀ շնորհվող կրեդիտների համար նախատեսված առաջավոր փորձի վերլուծությունը միջազգային չափորոշիչների կիրառման գործընթացում» խորագրով երկրորդ ենթագլխում ներկայացված է հիմնախնդրի դրվածքը՝ խոսքային խանգարումներ ունեցող երեխաների խոսքի գնահատմամբ և զարգացմամբ զբաղվող մասնագետների համար առաջարկվող տեսագործնական մոտեցումների կիրառման արդյունավետությունը, որն էլ հաճախ, անմիջականորեն կախված է շարունակական մասնագիտական զարգացման համար անհրաժեշտ տեսական նոր գիտելիքների, խոսքային խանգարումներ ունեցող երեխաների հաղորդակցական և խոսքի զարգացման համար անհրաժեշտ տեսական դրույթների զարգացման հիմնական միտումների և նրանց ցուցաբերվող լոգոպեդական ծառայությունների մատուցման հնարավորությունների ընդլայնումից, ինչը գործնականում կարելի է ապահովել շարունակական կրթության պայմաններում իրականացվող լոգոպեդական աշխատանքների բովանդակության, մեթոդների գործնական մշակմամբ և ներդրմամբ:

«Կրթության կազմակերպման մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների տրամադրման կարգը» որպես

առաջադրված մասնագիտական տեսական և գործնական վերապատրաստումների արդյունքում կատարված վերլուծությունների և մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների տրամադրման հիմք» խորագրով երրորդ ենթագլխում ներկայացված է ՀՀ-ում ներդրված՝ «Կրթության կազմակերպման մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների տրամադրման կարգը», որը ներկայումս հնարավորություն է ստեղծում լիցենզավորում ունեցող տարբեր կառույցների կողմից իրականացնելու մասնագիտական տեսական և գործնական վերապատրաստումներ:

«Հետազոտության տեսանկյան հիմնավորումը» խորագրով չորրորդ ենթագլխում ներկայացված է լոգոպեդական օգնության կազմակերպումը, որը ներկայումս ընդլայնվում է՝ ինտեգրելով նոր տեխնոլոգիաներ, մոտեցումներ և նորարական միջամտություններ: Այս առումով վստահաբար կարելի է արձանագրել, որ մանկավարժների համար նախատեսված վերապատրաստման և զարգացման ծրագրերն ավելի շատ են, մինչդեռ համընդհանուր ներառականության պայմաններում պետք է կարևորել նաև հատուկ մանկավարժների ՇՄԶ կրեդիտավորումը՝ պարտադիր ատեստավորմանը ներկայացվող պահանջներով:

Երկրորդ գլխի՝ «Լոգոպեդական շարունակական վերապատրաստումների իրականացման գնահատման ուղղությամբ կազմակերպվող հետազոտությունը հետբուհական ուսուցման գործընթացում» խորագրով գլուխը բաղկացած է չորս ենթագլխից:

«Հետազոտության խնդիրները և մեթոդները» խորագրով առաջին ենթագլխում ներկայացված են մասնագիտական գրականության գիտատեսական վերլուծությունը, հետբուհական ուսուցման գործընթացում լոգոպեդական շարունակական վերապատրաստումների իրականացման գնահատման ուղղությամբ կազմակերպվող ուսումնասիրությունն ու հետազոտության տեսանկյան հիմնավորումը, ինչպես նաև՝ հիմնախնդրի դրվածքի հետազոտությունն՝ ուղղված մասնագետների որակավորման բարձրացմանը:

«Հետազոտության կազմակերպումը և փուլերը: Մասնագիտական հանրույթի տեղեկացվածության ուսումնասիրությունը հետբուհական կրթության գործընթացում» խորագրով երկրորդ ենթագլխում ներկայացված են ՇՄԶ կրեդիտային համակարգի ուսումնասիրության, մանկավարժահոգեբանական աջակցության շրջանակներում առաջադրված մասնագիտական տեսական և գործնական նյութերի առկայության, մշակված չափորոշիչների և գործիքների ուսումնասիրությանն ուղղված և ատենախոսական հետազոտության իրականացման որոշակի փոխկապակցված փուլերը, որոնք երեքն են:

«Շարունակական մասնագիտական զարգացմանն ուղղված վերապատրաստումների դերը մասնագետների գիտելիքների, կարողությունների, հմտությունների և փորձառության մակարդակի

կատարելագործման գործընթացում» խորագրով երրորդ ենթագլխում վերլուծված են իրականացված վերապատրաստումները՝ ՅՈՒՆԻՍԵՖԻ հայաստանյան գրասենյակի գործընկերության և աջակցության հաստատմամբ, Երևանի և Շիրակի մարզի ՀՀ ԿԳՄՍ, Առողջապահության և Սոցիալական հարցերի նախարարությունների ենթակայությամբ գործող կազմակերպությունների աշխատանքը, որի արդյունքում կազմակերպվել է համագործակցային աշխատանք, ինչը հիմք է հանդիսացել իրականացվող շարունակական մյուս դասընթացների կազմակերպման և մշտադիտարկման՝ սուպերվիզիաների արդյունքների հիման վրա իրականացված հաջորդական քայլերի որոշման համար:

«Գործընկերային գնահատման քննարկումները որպես ՇՄԶ որակավորման ծրագրերի կազմակերպման արդյունավետ պայման» խորագրով չորրորդ ենթագլխում առաջարկվել են անցկացված հետազոտության արդյունքում ոլորտում աշխատող լոգոպեդների գիտելիքների, կարողությունների և հմտությունների գնահատման համար անհրաժեշտ մեթոդական ցուցումներ, հանձնարարություններ, որոնք ամփոփ ներկայացնում են վերապատրաստումների հիման վրա կիրառվող համակարգային ծրագիրը, որը և զետեղված է հետազոտության հավելվածում:

Նշվում է, որ անցկացված հետազոտության արդյունքում ՏՄԱԿ-երի լոգոպեդների և հանրակրթական դպրոցի ուսուցիչների, ինչպես նաև մանկավարժահոգեբանական աջակցություն տրամադրող մասնագետների և Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի Հատուկ և ներառական կրթության ֆակուլտետի բարձր կուրսեցիների և մագիստրոսների զգալի մասը իրականացվող պարտադիր ՇՄԶ գնահատման, որոշակի չափանիշներով լոգոպեդների որակավորման բարձրացմանը միտված վերապատրաստումների և նոր որակի լոգոպեդական ծառայությունների տրամադրման վերաբերյալ, ունեն միայն որոշակի գիտելիքներ և գործնական կարողություններ:



Տրամագիր 1. Հարցված մասնագետների տեղեկացվածության ցուցանիշները ՇՄԶ գնահատման չափանիշներով իրականացվող լոգոպեդների որակավորման բարձրացման վերաբերյալ:

Երրորդ՝ «Շարունակական մասնագիտական զարգացումը որպես լոգոպեդի որակավորման բարձրացման միջոց» խորագրով գլուխը բաղկացած է չորս ենթագլխից:

«Շարունակական մասնագիտական զարգացման օրինակելի ծրագրի բովանդակությունը» խորագրով առաջին ենթագլխում կարևորվում է շարունակական մասնագիտական զարգացման՝ որպես որակյալ և ժամանակակից մասնագիտական գործունեության անբաժանելի բաղադրիչի դերը՝ ՇՄԶ համակարգային ծրագիրը, որն առաջին հերթին, պահանջում է հավաստագրեր ունեցող լոգոպեդների մասնագիտական գիտելիքների և կարողությունների պարբերաբար թարմացում՝ ապահովելով ապացույցների վրա հիմնված, անձնակենտրոն և արդյունավետ ծառայությունների մատուցման հնարավորությունը:

2026 թվականի հունվարի 1-ից ուժի մեջ մտնող նոր պահանջների համաձայն՝ ASHA-ի բոլոր հավաստագրված մասնագետները յուրաքանչյուր երեքամյա հավաստագրման պահպանման ժամանակահատվածում պետք է հավաքեն և հաշվետու դարձնեն առնվազն 30 մասնագիտական զարգացման ժամ (Professional Development Hours, PDHs): Այս պահանջը նպատակ ունի խթանել շարունակական ուսումնառությունը և մասնագետների կարողությունը՝ արձագանքելու գիտության, տեխնոլոգիաների և անընդհատ փոխակերպվող հասարակության զարգացման պահանջներին:

«ՇՄԶ գնահատման առանձնահատկությունների, ընթացքի և անցկացված հետազոտության արդյունքների մեթոդական վերլուծություն: Լոգոպեդական գնահատման գործընթացի բովանդակությունը» խորագրով երկրորդ ենթագլխում ներկայացվում են շարունակական մասնագիտական զարգացման ծրագրի կիրառման արդյունքում ձեռք բերված կարողությունները՝ առավել ճգրիտ և համեմատելի վիճակագրական տվյալներ ունենալու հնարավորությունները՝ կրթական և վերականգնողական/զարգացման հաստատություններում աշխատող մասնագետների որակավորման վերաբերյալ:

«ՇՄԶ հավաստագիրը որպես լոգոպեդի մասնագիտական գործունեություն իրականացնելու հնարավորություն» խորագրով երրորդ ենթագլխում մշակվել է ծրագիր, որը նախատեսված է լոգոպեդների շարունակական մասնագիտական զարգացմանը: Ծրագիրը կառուցված է 24 ուսումնական ժամի հիման վրա և կարող է օգտագործվել որպես California Board-ի CPD/CE պահանջներին համապատասխանեցվող վերապատրաստման օրինակելի պլան: CEU-ն առավել պաշտոնական հաշվարկային միավոր է, որը լայնորեն կիրառվում է տարբեր կրթական և մասնագիտական կազմակերպությունների կողմից: ASHA-ի համակարգում CEU-ները և PDH-ները փոխկապակցված են. 1 CEU-ը համարժեք է 10 PDH-ի, իսկ 0,1 CEU-ը հավասար է 1 PDH-ի: Հետևաբար, CEU-ն կարելի է դիտարկել որպես նույն ուսուցողական գործունեության չափման ավելի խոշոր միավոր, որն օգտագործվում է մասնագիտական կրթության արդյունքները միավորելու և ընդհանրացնելու համար: Իրականացված ՇՄԶ-երի արդյունքում մենք հնարավորություն ենք

ունեցել մասնագիտական զարգացման ժամերը փոխարկել CEU-ների և որոշ դեպքերում՝ ակադեմիական կրեդիտների:

«Լոգոպեդական ծառայությունների իրականացման արդյունավետությունը շարունակական կրթության ապահովման գործընթացում» խորագրով չորրորդ ենթագլխում ներկայացված են հետազոտության շրջանակներում անցկացված՝ 2023թ. սեպտեմբերի՝ **«Աուտիզմի և Ասպերգերի համախտանիշ»**, 2024թ. նոյեմբերի՝ **«Խոսքի ապրաքսիա»**, 2024-2025 թթ. նոյեմբերի, հունվար և փետրվարի՝ **«Աուտիզմի համախտանիշ ունեցող երեխաների հետ կազմակերպվող լոգոպեդական աշխատանքի առանձնահատկությունները»** և **«Լոգոթերապիան ԿԱՊԿ ունեցող երեխաների հետ»**, 2024-2026թթ **«Աուտիզմի համախտանիշ ունեցող երեխաների հետ կազմակերպվող լոգոպեդական աշխատանքի առանձնահատկությունները»** խորագրերով ՇՄՋ վերապատրաստումները:

Հետազոտության իրականացման տարբեր փուլերում փորձագիտական խմբում ընդգրկված տարբեր մասնագետներ փուլային ձևաչափով մասնակցել են տարբեր քննարկումների: Իրականացված եռամյա վերապատրաստումների արդյունքներն առավել քան հուսադրող են, քանի որ ՇՄՋ գործընթացների բարելավումը, թույլ է տալիս ապահովել ոչ միայն շջանավարտ-բուհ հետադարձ կապի, հասարակության և նրա անդամների համակողմանի զարգացման համար կարևորվող մասնագիտական նպաստավոր պայմաններ, այլև բարելավել աշխատուժի մասնագիտական կարողությունները և հմտությունները աշխատաշուկային համապատասխանեցնելու և մասնագիտական համագործակցության տեսանկյունից:



Տրամագիր 2. Շարունակական մասնագիտական զարգացմանը միտված վերապատրաստումների արդյունավետությունը համագործակցային կարողությունների ձևավորման գործընթացում:

Իրականացված հետազոտության արդյունքում թե ստուգողական և թե փորձարարական խմբում ընդգրկված մասնակիցները կարողացան վերապատրաստումների արդյունքում ձևավորել գործընկերային հարաբերություններ, իսկ ողջ ընթացքում կատարված գնահատման քննարկումները որոշիչ նշանակություն են ունեցել որակավորման ծրագրերի մշակման, ներկայացման և բովանդակային փոփոխությունների առաջարկման տեսանկյունից:

Փուլային հաջորդականությամբ գնահատելով և համակարգելով 320 մասնագետների մասնակցությունը կազմակերպված ՇՄՋ վերապատրաստումներին կարելի է փաստել, որ հնարավորություն է ստեղծվել ունենալու բավականին օբյեկտիվ պատկեր՝ մասնագիտական կարողությունների և հմտությունների կատարելագործման և որակի բարձրացման առումով:



Տրամագիր 3. ՇՄՋ ծրագրերով կազմակերպված ուսումնառության արդյունքների համեմատական վերլուծությունը ստուգողական խմբում:

Ատենախոսական հետազոտության եռամյա ՇՄՋ վերապատրաստումներին մասնակցել են 160՝ լոգոպեդներ (2023-2026թթ.), որոնց մասնագիտական որակավորման բարձրացմանն ուղղված գնահատումն իրականացվել է նեղ մասնագիտական մոտեցումներով, մեթոդաբանությամբ, գնահատման մոտեցումների, ծառայությունների մատուցման մոդուլային անհատական ծրագրերի, նոր տեղեկատվական համակարգով աշխատելու, փաստաթղթերը բացառապես էլեկտրոնային տարբերակով մշակելու և այլ հմտությունների մեթոդներով:



Տրամագիր 4. ՇՄՋ ծրագրերով կազմակերպված ուսումնառության արդյունքների համեմատական վերլուծությունը փորձարարական խմբում:

Նշվում է, որ եռամյա մանկավարժական գիտափորձի արդյունքների ամփոփումը ստուգողական և փորձարարական խմբերում թույլ է տալիս շարունակական մասնագիտական զարգացման տեսանկյունից ամփոփել մանկավարժական փորձարարության տարբեր փուլերում դրական փոփոխությունների գրանցումը՝ վերապատրաստվող մասնագետների բոլոր խմբերի մասնակիցների գիտելիքների, կարողությունների և հմտությունների որակավորման տեսանկյունից: Իսկ հետազոտության արդյունքում առաջադրվող՝ լոգոպեդների շարունակական մասնագիտական զարգացման կրթական ծրագիրը մասնագիտական զարգացման անհրաժեշտ պայման է և անպայմանորեն պետք է ուղղված լինի մանկավարժական կրթության արդի վիճակի բարելավմանը և նրա առաջանցիկ զարգացման ապահովմանը՝ հանդիսանալով մանկավարժական բուհի առաքելություններից մեկը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Մասնագիտական գրականության գիտատեսական վերլուծությունը, իրականացված բազմածավալ հետազոտությունները, ՇՄԶ վերապատրաստումների արդյունքում, թույլ են տալիս կատարել հետևյալ եզրակացությունն՝ իր հետևություններով.

1. Լոգոպեդական աջակցության ծառայություններ տրամադրող մասնագետների շարունակական մասնագիտական զարգացման խնդիրներին միտված վերապատրաստումները պետք է ուղղված լինեն մասնագետների միջև համագործակցային կարողությունների ձևավորմանը:
2. Նեղ մասնագետների որակավորման ծրագրերի մշակման, ներկայացման և բովանդակային փոփոխություններին միտված վերապատրաստումները շարունակական մասնագիտական զարգացման կազմակերպման արդյունավետ պայման են:
3. Լոգոպեդների շարունակական մասնագիտական զարգացման տեսական, գործնական և ինքնակրթության համակարգային ծրագիրը հնարավորություն է ընձեռում առավել ճգրիտ և համեմատելի վիճակագրական տվյալներ ունենալ կրթական և վերականգնողական/զարգացման հաստատություններում աշխատող մասնագետների որակավորման վերաբերյալ:
4. ՇՄԶ գործընթացի կազմակերպման հստակ և ստույգ ձևակերպված չափանիշներով և սահմանված որոշակի ժամաքանակով վերապատրաստման դասընթացը թույլ տվեց մասնակիցներին ծանոթանալ աշխարհում կիրառվող լոգոպեդական տարբեր պրակտիկաների՝ AAC-ի օգտագործմանը, խոսքի ապրաքսիայի դեպքում արտահայտվող ամենատարբեր՝ հոգեխոսքային և շարժողական խնդիրների հաղթահարման ամերիկյան մեթոդներին, կիրառել համապատասխան գործիքակազմ և խոսքային նյութեր, որոնց կիրառելի տարբերակները հայերեն լեզվով տրամադրվել են փորձարարական խմբի բոլոր մասնակիցներին:
5. Լոգոպեդների շարունակական մասնագիտական զարգացման համար 24 ուսումնական ժամի հիման վրա մշակված ծրագիրը համապատասխանում է միջազգային չափանիշներին, ներառում է California Board-ի CPD/CE պահանջներին համապատասխանեցված վերապատրաստման օրինակային պլան, ինչը բավարարում է հավաստագրման պահպանման համար ներկայումս հրապարակվող միջազգային պահանջներին 30+2 PDH ժամաքանակով:
6. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ անգամ վերապատրաստում անցած մասնագետներին հետագայում դժվար է առանց փորձագետի օժանդակության պրակտիկայում ներդնել սովորած մոտեցումները, մեթոդները, անհրաժեշտ է ստեղծել սուպերվիզիաների մեխանիզմ, որի

օգնությամբ դասընթացի ժամանակ ձեռք բերված գիտելիքը, փորձագետի աջակցությամբ, քայլ առ քայլ կներդրվեն լոգոպեդական պրակտիկայում:

7. Վերլուծելով ՇՄԶ վերապատրաստման ժամանակակից մոտեցումներն ու մասնագիտական ուղեցույցների կիրառման առաջատար փորձն՝ ըստ սահմանված կրեդիտային համակարգի և գնահատման առանձնահատկությունների, նպատակահարմար է ապագա մանկավարժների ու աջակցող մասնագետների բուհական ծրագրերում ներառել այնպիսի կամընտրովի առարկաներ, որոնք ի սկզբանե միտված կլինեն նոր մեթոդիկաների ու նորագույն տեխնոլոգիաների հետ ծանոթացմանը, մասնագիտական գիտելիքների, կարողությունների և հմտությունների տիրապետմանն ու առավել արագ տարածմանը:
8. Շարունակական մասնագիտական զարգացման կրեդիտներ (ՇՄԶ կրեդիտներ) հավաքելու և յուրաքանչյուր շրջափուլում առնվազն երեք տարվա մասնագիտական գործունեության իրականացման գնահատումը թույլ է տալիս եզրակացնել, որ ՇՄԶ վերապատրաստման ժամանակակից մոտեցումները հիմք են հանդիսանում մասնագիտական առաջատար փորձը տարածելու, զարգացնելու համար, եթե իրականացվում են որոշակիորեն սահմանված կրեդիտային ծրագրի և մշակված գնահատման առանձնահատկությունների չափանիշներով:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի հետևյալ հրատարակություններում.

1. Ashekian, T. K. The fundamental issue of continuing education in speech therapy. Armenian Journal of Special Education, Vol. 8 No. 1 2024. P.6
2. Ashekian, T. K. A comparative study of continuing professional development for speech therapists and teachers in Armenia and beyond . Armenian Journal of Special Education, Vol. 8 No. 2.2024. P.13
3. Ashekian, T. K. Methods to enhance speech pathologist, professional qualifications in collaborative work [Manuscript]. ResearchGate. Armenian Journal of Special Education, Vol. 9 No. 2 2025. P. 19
4. Ashekian, T. K. Speech-language pathology practice advancement: The influence of research and evidence-based practice on staying current . Armenian Journal of Special Education, Vol.9 (1). 2025. P.12
5. Avagyan, A., Ashekian, T., Snkhchyan, A., Mkrtchyan, H., Petrosyan, T. Barriers and solutions in the use of alternative and augmentative communication: A pilot descriptive study presenting insights from Armenian professionals . Georgian Medical News,,2025. P. 63–71.

6. Saratikyan, L., Harutyunyan, M., Marukyan, V., Ashekian, T., Grigoryan, G., Aslanyan, A., Petrosyan, H. Optimizing psycho-pedagogical support systems for learners with intellectual disabilities: A comprehensive framework . International Journal of Special Education, 2026. 41 (5), P. 214–223.
7. Aleksanyan, M., Harutyunyan, M., Muradyan, S., Hovyan, G., Harutyunyan, I., Ashekian, T., Sahakyan, K. A collaborative approach to supporting children with psychophysical developmental challenges . Journal of Daoist Studies, 19 (S1), P. 908–912.
8. Hovyan G., Ashekian T., Harutyunyan M., Muradyan S., Marukyan V., Grigoryan G., Aslanyan A., Sahakyan K. Ensuring Continuous Education as a Fundamental Component of Pedagogical Methods and Approaches in Contemporary Speech-Language Pathology. International Journal of Special Education, Retrieved from, Vol. 41. 2026. P. 26.

ТАЛИН АЙКАЗОВНА ГАЛФАЯН АШИКЕЯН
ПРОБЛЕМА НЕПРЕРЫВНОГО ОБРАЗОВАНИЯ КАК СРЕДСТВА ПОВЫШЕНИЯ ПРОФЕССИОНАЛЬНОЙ КВАЛИФИКАЦИИ ЛОГОПЕДА

Диссертация на соискание ученой степени кандидата педагогических наук по специальности 13 00.03 — «Специальная педагогика» (логопедия).

Защита диссертации состоится 25 декабря 2026 г., в 10:00 ч. на заседании специализированного совета 020 КВОН «Педагогика» по присуждению ученых степеней при Армянском государственном педагогическом университете им. Х.Абовяна по адресу: 0010, г. Ереван, пр. Тиграна Меца 17.

РЕЗЮМЕ

Актуальность исследования. Руководствуясь постановлениями Правительства Республики Армения, принятыми в 2013, 2017, 2022 и 2023 годах в соответствии с пунктом 1 статьи 17.1 Закона Республики Армения «Об общем образовании», поправка № 1177-Н от 28 июля 2022 года предусматривает утверждение новых стандартов и инструментов предоставления услуг психолого-педагогической поддержки. Это, прежде всего, предполагает разработку возможностей непрерывного профессионального развития специалистов — логопедов, занимающихся развитием речи, преодолением, профилактикой и коррекцией речевых нарушений. С этой точки зрения однократное получение базового образования уже не может считаться достаточным условием для специального педагога XXI века — логопеда. Непрерывное образование позволяет логопедам соответствовать современным требованиям и владеть новой информацией, основанной на доказательных данных, которая может быть полезна в их профессиональной практике.

Цель исследования — разработать программу непрерывного профессионального развития логопедов, соответствующую концепции развития педагогического образования.

Задачи исследования:

1. Изучить современные подходы к непрерывному профессиональному развитию в соответствии с процедурами повышения квалификации и соответствующими направлениями, закреплёнными в кредитной системе.
2. Исследовать и проанализировать современные подходы к повышению квалификации в рамках НПР, а также передовой опыт применения профессиональных руководств с учётом установленной кредитной системы и особенностей оценивания.
3. Разработать системную программу НПР для логопедов, работающих с детьми с особыми образовательными потребностями, и экспериментальным путём обосновать эффективность повышения

квалификации, осуществляемого в соответствии с процедурой присвоения кредитов НПР, отвечающей международным стандартам.

Научная новизна исследования: Изучены требования к организации, проведению и участию в мероприятиях, обеспечивающих непрерывное профессиональное развитие логопедов, а также количество кредитов НПР, присваиваемых по каждому виду непрерывного профессионального развития, и порядок их присвоения: Разработана системная программа непрерывного профессионального развития логопедов, включающая теоретическое, практическое обучение и самообразование, обязательные требования к повышению квалификации специалистов, работающих в образовательных и реабилитационных учреждениях и учреждениях развития, чётко сформулированные критерии организации процесса НПР и установленное количество часов.

Теоретическая значимость исследования заключается в теоретическом обосновании эффективности предлагаемых подходов к организации и реализации мероприятий, обеспечивающих непрерывное профессиональное развитие логопедов, а также к организации и осуществлению обучения в рамках программ НПР с целью развития профессиональных способностей, умений и навыков специалистов. Она также заключается в теоретическом обосновании полученных результатов исследования и реализации профессионального повышения квалификации с использованием информационных технологий в очном и онлайн-форматах.

Практическая значимость исследования заключается в практической разработке предлагаемых подходов к содержанию, методам, организации и реализации повышения квалификации, обеспечивающего непрерывное профессиональное развитие логопедов, а также во внедрении этих подходов в педагогический процесс НПР в соответствии с разработанными программными направлениями и информацией, отражающей соответствующую квалификацию.

Обоснованность и достоверность результатов исследования обеспечены достаточным количеством участников исследования, объёмом проведённой работы, применением современных и соответствующих методов исследования, а также тщательной статистической обработкой фактического экспериментального материала.

Научный опыт и внедрение. Отдельные положения, результаты и выводы диссертации были представлены на заседаниях кафедры логопедии и реабилитационной терапии Армянского государственного педагогического университета имени Х. Абовяна (2023–2025 гг.). Исследование проводилось в 2023–2026 годах в Армянском государственном педагогическом университете имени Х. Абовяна, территориальных центрах педагогической и психологической поддержки № 1, 2, 3 и 4 города Еревана, территориальном центре

педагогической и психологической поддержки города Гюмри, а также в центре «Армав».

Структура и объём диссертации. Диссертация изложена на 185 страницах компьютерного текста и состоит из введения, трёх глав, заключения, списка использованной литературы и приложения. Текст диссертации содержит 8 таблиц, 12 диаграмм, 5 рисунков, 2 графика и 8 приложений.

TALINE HAYGAZ KALFAYAN ASHEKIAN
THE ISSUE OF CONTINUING EDUCATION AS A MEANS OF ENHANCING THE PROFESSIONAL QUALIFICATIONS OF SPEECH-LANGUAGE THERAPISTS

Dissertation submitted for the degree of PhD Candidate of Pedagogical Sciences in the specialty 13.00.03 – "Special Pedagogy" (Speech-Language Pathology).

The defense of the dissertation will take place on 25 December, 2026, at 10:00 AM, at a meeting of the specialized council 020 of the HESC, "Pedagogy," for the Award of Academic Degrees at Khachatur Abovian Armenian State Pedagogical University, at the following address: 17 Tigran Mets Avenue, Yerevan 0010, Republic of Armenia.

SUMMARY

The relevance of the research. Guided by the Government of the Republic of Armenia's decisions adopted in 2013, 2017, 2022, and 2023, pursuant to Point 1 of Article 17.1 of the Law of the Republic of Armenia "On General Education," Amendment No. 1177-N of July 28, 2022, provides for the approval of new standards and tools for the provision of psychological and pedagogical support services. This, first and foremost, necessitates the development of continuing professional development opportunities for specialists—speech-language therapists engaged in speech development and in the prevention, remediation, and correction of speech disorders. From this perspective, obtaining basic education only once is now an insufficient condition for a 21st-century special education teacher—a speech-language therapist. Continuing education enables speech-language therapists to remain up to date and acquire new evidence-based information that may be useful in their professional practice.

The aim of the research is to develop a continuing professional development program for speech-language therapists in accordance with the concept of pedagogical education development.

The objectives of the research are:

1. To study contemporary approaches to continuing professional development in accordance with the training procedures and relevant fields established within the credit system.
2. To investigate and analyze contemporary approaches to professional development within the framework of continuing professional development, as well as best practices in the application of professional guidelines, taking into account the established credit system and assessment requirements.
3. To develop a systematic CPD program for speech-language therapists working with children with special educational needs and to experimentally substantiate the effectiveness of professional development implemented in accordance with an internationally aligned CPD credit-awarding procedure.

Scientific novelty of the research: The requirements for organization, implementation, and participation in activities ensuring the continuing professional development of speech-language therapists have been studied, along with the number of CPD credits awarded for each type of continuing professional development and the procedure for awarding them. A systematic program for the continuing professional development of speech-language therapists has been developed, incorporating theoretical learning, practical training, and self-directed learning. The program establishes mandatory requirements for the professional development of specialists working in educational, rehabilitation, and developmental institutions; clearly defined criteria for organizing the CPD process; and specified time requirements.

The theoretical significance of the research lies in the theoretical substantiation of the effectiveness of the proposed approaches to organizing and implementing activities that ensure the continuing professional development of speech-language therapists, as well as to organizing and delivering learning through CPD programs aimed at developing the professional abilities, competencies, and skills of specialists. It also involves the theoretical substantiation of the research findings and the implementation of professional development through information technologies in face-to-face and online formats.

The practical significance of the research lies in the practical development of the proposed approaches to the content, methods, organization, and implementation of professional development aimed at ensuring the continuing professional development of speech-language therapists, as well as in the integration of these approaches into the pedagogical CPD process in accordance with the developed program areas and information reflecting the relevant qualifications. This makes it possible to obtain more objective data and provide a clear description of the content of professional development programs organized for speech-language therapists.

The validity and reliability of the research results are ensured by the sufficient number of research participants, the scope of the work conducted, the

application of contemporary and appropriate research methods, and the thorough statistical processing of the empirical experimental data.

Research dissemination and implementation. Individual provisions, findings, and conclusions of the dissertation were presented at meetings of the Department of Speech-Language Therapy and Rehabilitation Therapy of Khachatur Abovian Armenian State Pedagogical University (2023–2025). The research was conducted between 2023 and 2026 at Khachatur Abovian Armenian State Pedagogical University, Territorial Centres for Pedagogical and Psychological Support Nos. 1, 2, 3, and 4 in Yerevan, the Territorial Centre for Pedagogical and Psychological Support in Gyumri, and the "Armav" Centre.

Structure and scope of the dissertation: The dissertation comprises 185 pages of computer-processed text and consists of an introduction, three chapters, a conclusion, a list of references, and an appendix. The dissertation contains 8 tables, 12 diagrams, 5 figures, 2 graphs, and 8 appendices.

